ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբերի 2012թ. N 505

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 238 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի (Էջմ.) գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 13 -ի N 123 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Վանանդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահի 2012 թվականի նոյեմբերի 7-ի N24 գրությունները

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010թվականի հուլիսի 8-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների կազմերը հաստատելու մասին>> N 238 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման հավելվածում՝

ա.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում <<4.Գալստյան Ռազմիկ - համայնք>> բառերը փոխարինել <<4.Մկրտչյան Լիլիթ - համայնք>> բառերով.

բ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Վանանդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում <<8.Հակոբյան Քրիստինե - ծնող>> բառերը փոխարինել <<8.Խլղաթյան Ռուզաննա - ծնող>> բառերով.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ